Գուցէ Բագուի համար շատ գիտելիք և գրելիք կան գանազան գրեանց մէջ և տեղական ժողովրդեան մօտ, ինչպէս և օտարազգի ճանապարհորդների գրուածոց մէջ. զոր օրինակ՝ Սէն Մարտէն, Կիմպֆէր, Ադամ Օլարէիւս, Քեաթիպ Չէլէբի են, բայց նրանցից տեղեկութիւն քաղելը իմ գիտութիւնից և կարողութիւնից բարձր լինելոյ պատճառաւ՝ թողուցի, յանձնելով և խնդրելով դարձեալ յարգոյ վարժապետներին՝ պարապ միջոցում աշխատել իմ գրուածոցս թերութիւնը լրացնելու։

Ցիրաւի Բագուի բերդի և աշտարակի վրայի արձանագրեբի պատճէնները պէտք է վերցնէի տեղագրութեանս մէջ դնելու, բայց պարսիկ կարդացողներն ասացին, որ այն գրուածքները պատմութեան նիւթ չեն, այլ զուրանից առած աղօթքներ Քիւֆի կամ Սինդի, Արապի գրով՝ բերդի հաստատութեան համար և յիրաւի բաւական զօրաւոր աղօթքներ են, որ կարողացել են իբր թէ ազատ պահել բերդը ռուսաց հզօր և ահարկու թնդանօթների ձեռքից, և ամբողջ պահել երեք, չորս հարիւրաւոր տարիներ։

Բագուեցւոց գրօսարանն է Բայիլ և Բիբիհէյբաթ անունով քաղաքի շրջակայքը, իսկ դարնանը՝ Ջիրա անունով կղզեակը, ուր շոգենաւակով (պարկաղ) և նաւակով գնալով բազմութեամբ՝ զուարճանում են թռչուն և ճագար որսալով և կերուխումով, որ տեղ կիրակի օրերը յառաջուց գնալով կապալառուք՝ պատրաստում են կերակուրներ և ըմպելիք, և թանդ թանդ վաճառում են բագուեցւոց վրայ։

Բագուեցիք ունին գրօսավայր և քաղաքամիջի ճեմելիքը (բուլվարը), որ զարդարած է առաւել իլդուն անունով հասարակ ծառով, որ Էջմիածնայ դաւառի Մարգարէի գիւղի շրջապատը՝ Երասխի ափերին լիքն է իբրեւ վայրենի մացառ։

Զրօսավայր է նաեւ երկաթուղւոյ կայարանի (վոկզալ) ծառաստանը, ուր գնացողը զրօսնում է առաւելապէս երկաթուղւոյ գնացքի տեսարանովն։

Բագուի եկեղեցին չունի յարմար առաջնորդարան, որ առաջնորդը կարողանայ կառավարել՝ ինչպէս ունի Տփխիս, Ղուշի,